

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ովհաննեսի բանաստեղծություններից հայագիտության մեջ հանրածանոթ է նրա «Բան իմաստութեան ի պատնառս զքօսանաց առ ձագն, որ զաղօթանցաւ նորա նոռողէր քաղցրածայն, որ կոչի սարիկ» վերնագրով տաղը: Հովհաննեսի այս տաղը պահել է Մարտիանի սպարոցի մատենադարանի մի ձեռագիր աղօթգիրքը: Տաղի տեքստը, սպարոցի վարդապետի հանձնարարությամբ, արտագրվել և ուղարկվել է Վենետիկյան Մխիթարյաններին, որը և Հ. Ղ. Ալիշանի կողմից հրատարակվել է 1847 թվի «Բաղմավէպ»-ում¹: Հովհաննեսի այս տաղը, Ալիշանից առնելով, երկրորդ անգամ 1944 թվին հրատարակել է պրոֆ. Մ. Աբեղյանը իր «Հովհաննես Սարկավագ Վարդապետ» վերնագրով կրող հոդվածի հավելվածում²:

Հովհաննեսի այս քերթվածը առանձնահատուկ ուշադրության է արժանացել և բարձր գնահատվել հայագիտության մեջ: Այսպես, Ալիշանը գտնում է, որ Հովհաննեսի այս տաղը ամեր գրականության մեջ աննման դրվածոց մեկն է³: Պրոֆ. Մ. Աբեղյանը Հովհաննեսի այս տաղը համարում է նշանակալից նորություն հայ մատենագրության մեջ. «Սարկավագ վարդապետի բանաստեղծություններից, — գրում է նա, — մնում է միայն մեկը՝ «Բան իմաստութեան ի պատնառս զքօսանաց առ ձագն, որ զաղօթանց»

ցաւ նորա նոռողէր քաղցրածայն, որ կոչի սարիկ»: Այս մեծ (188 երկայն տողերով) քերթվածն իր ձևով և բովանդակությամբ մի նշանակալից նորություն է մեր հին գրականության պատմության մեջ: Եթե դա պատահմամբ փրկված շիներ կորստից, մեր նոր մտախոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար⁴: Այն նա ցավելով անելացնում է. «Եվ ո՞վ գիտե՞ քանի՜ այդպիսի արժեքավոր բանաստեղծություններ ոչնչացել են»⁵: Ի դեպ, «Սարեակ»-ի մի ընդօրինակություն, նոր գրությամբ, մենք տեսել ենք Երուսաղեմի Հայոց Ազգային Պատրիարքարանի մատենադարանի ձեռագրերից մեկում⁶:

«Սարեակ»-ից բացի, հայագիտության մեջ մատնացույց են արվել Հովհաննեսի երեք տաղերը՝ «Յոհաննու քաջանայի առ Սարգիս վասն տաղիցն»; «Նորին վասն միսոյ ողբականին» և «Նորին Յոհաննու առ կոյրն աչղագոյն և լուսաւոր» վերնագրերով: Հովհաննեսի այս տաղերի մասին տեղեկություն է հաղորդել Ոսկյանն իր «Հովհաննես Սարկավագի գրությունները» հոդվածի մեջ՝ հիմք ունենալով Քելիշյանի կազմած Զմմառի ձեռագրաց ցուցակը:

Ոսկյանի տեղեկությունից երևում է, որ նշված տաղերն ընդօրինակված են Զմմառի մատենադարանի № 195 ժողովածուի մեջ հետևյալ հերթականությամբ.

- ա. Թ. 136բ, «Յոհաննու սուրբ վարդապետի սասցեակ Բան իմաստութեան ի պատնառս զքօսանաց...»;
- բ. Թ. 138ա, «Վասն մաշկեկին, յորոյ վերայ թանաքն վայթեցաւ...»;

1. «Բաղմավէպ, 1846 թ., էջ 221—225:
 2. Հայկ. ՍՍՌ. Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1944 թ., № 1—2, էջ 53—58:
 3. Ղ. Ալիշան, «Յուշիկը», Բ հատոր, էջ 295:
 4. Հայկ. ՍՍՌ. Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1944 թ., № 1—2, էջ 39:
 5. Նույնը:
 6. Այդ ձեռագիրը գրանցված էր № 1837-ի տակ:

գ. (անդ), «Յոհաննու քահանայի առ Սարգիս վասն տաղիցն...»

դ. Թ. 138բ, «Նորին վասն միտոյ ողբականին»

ե. (անդ), «Նորին Յոհաննու առ կոյրն աշեղագոյն եւ լուսաւոր...»⁷

Զմմառի մատենադարանի № 195 ժողովածուի խմբին պատկանող հին գրչութեան մի ձեռագիր, բարեբախտաբար, գտնվեց Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանում, ուր ընդօրինակված են Հովհաննեսի վերև հիշված բոլոր աշխատությունները, բացի «Սարեակ»-ից: Սակայն, մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ Հովհաննեսի վերև հիշված երեք տաղերի խնդրում Ոսկանը բացարձակ թշուրիմացության մեջ է: Եղված երեք աշխատությունները՝ «Առ Սարգիս վասն տաղիցն Յոհաննու քահանայի» (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 7, Թ. 91բ—92ա), «Նորին վասն միտոյն ողբականին» (նույնը, Թ. 92ա—92բ) և «Առ կոյրն աշեղագոյն եւ լուսաւոր Յոհաննու քահանայի» (նույնը, Թ. 92բ—93ա), ոչ թե տաղեր են, այլ Հովհաննեսի նամակները:

Հովհաննեսն իր այս նամակներից առաջինում, որն ուղղված է Սարգիս անունով մեկին, բացատրում է իր տաղերի նպատակագրումը՝ «Առ Սարգիս. վասն տաղիցն»:

Հովհաննեսի առաջին նամակի մեջ արված մի ակնարկից երևում է, որ նա իր տաղերը գրել է կրոնական աշխատությունների հավելվածում. «Աստահոթին կարծեմ եւ ո՛ւ ինչ նուազութիւն երջանիկդ հռչակելոյ,— գրում է նա,— ամփոփել ո՛ւ միայն զաղաւթականոցդ, որ է եւ յառաջացելոյ, այլ եւ զանձառագոյնսն, զոր պատփհ է անուով»⁸:

Հարց է առաջանում, թե Հովհաննեսն իր ո՞ր տաղերը նկատի ունի վերև բերված ակնարկով: Մեր կարծիքով, նա նկատի ունի «Սարեակ» տաղը: Մենք այդ ենթադրում ենք հիմք ունենալով հետևյալը. Հովհաննեսի այս նամակը տեղավորված է որպես հավելված «Սարեակ»-ի Զմմառի մատենադարանի պողոթնում: Սկզբում Հովհաննեսի աղոթքներն են, ապա ընդօրինակված է «Սարեակ»-ը և հետո՝ այս նամակը: Պարզ է, որ Հովհաննեսի նամակը և տաղը պատահական ձևով իրար մոտ չէին կարող բերվել: Կասկածելի կարող է այստեղ երևալ այն, որ այս նամակը մի տաղի միայն կապակցությամբ լի գրվել, այլ երկու և ավելի տաղերի՝ «վասն տաղիցն»: Դրա բացատրությունը հեշտ է

տալ, եթե մենք նկատի ունենանք, որ Հովհաննեսի «Սարեակ»-ը ձեռագրում երկու տարբեր տաղեր է համարվում՝ ա) «Եան իմաստութեան ի պատեառս գրոսանաց...», և բ) «վասն մաշկեկին, յորոյ վերայ քանակն վայրեցա»:

Ուշագրության արժանի է Հովհաննեսի մի անամակը, որը վերնագրված է. «Նորին (Յոհաննու), վասն միտոյն ողբականին»: Ուրեմն, առաջին նամակը մի տաղի մասին է եղել, իսկ երկրորդը՝ մյուսի, որի վերնագիրը, բարեբախտաբար, նա հիշում է Ուղբը («վասն ողբականին»): Առաջինը, ինչպես տեսանք, «Սարեակ»-ին է վերաբերում, իսկ ինչի՞ մասին է երկրորդը: Հասել է արդյոք Հովհաննեսի անունով «Ուղբ» վերնագրով այսպիսի մի տաղ:

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի վերև հիշված ձեռագրում մեզ հաջողվեց հայտնաբերել Հովհաննեսի երկրորդ նամակում ակնարկած այդ տաղը: Նա վերնագրված է. «Նորին (Յոհաննու) առ Սարգիս, Ուղբ»⁹:

Հովհաննեսի այս տաղը բաղկացած է 40 տողից: Տողերի առաջին տառերը ազդաստիկոսով հոդվում են. «Յովհաննէս քահանայ Սարգսի Մեծի խնդալ Աժ կենդանի»: Այսպիսով, և՛ վերնագրում, և՛ աների առաջին տառերի ազդաստիկոսում նշված է տաղի Հովհաննեսի հեղինակությունը պատկանելու փաստը: Կասկած չինել չի կարող, որ այստեղ խոսքն առաջին նամակի վերնագրում հիշված Սարգսին է վերաբերում: Ի դեպ, Հովհաննեսն այդ Սարգսին տոմարի կապակցությամբ գրել է այլ նամակներ ևս, որի վրա մենք կանգ կառնենք իր տեղում:

Հովհաննեսի այս տաղի չափը նույնն է, ինչ որ «Սարեակ»-ի չափն է, այսինքն՝ այն չափը, ինչ ընդունված է հայկական անվանել: Տաղը միահամուռ չէ: Բովանդակությամբ նա կրոնական է:

X—XIII դարերում հայ բանաստեղծական գրականությունը, ինչպես հայտնի է, բավականաչափ զարգացած է: Այդ շրջանից մեզ հասած արժեքավոր աշխատություններ շատ կան: Սակայն, մեր կարծիքով, բանաստեղծական իր վարպետ կառուցվածքով, իր շնչով, իր խոհանոցային բովանդակությամբ, Հովհաննեսի այս տաղը միջնադարյան հայ բանաստեղծական գրականության գլուխ գործոցներից մեկը կարելի է համարել:


Հովհաննեսի Ուղբ»-ի մանրամասն վերլուծումը և քննությունը թողնելով տաղերգուներով զբաղվող մեր մասնագետների

7. «Հանդես ամսօրեայ», 1925 թ., էջ 236—237:
8. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 7, Թ. 91բ:

9. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 6, Թ. 89ա—91բ:

ուշադրութեանը, ընթերցողներին փոքր ինչ ծանոթացնելու համար, մենք անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել միայն շորս տող:

Ինչ կենաց ընձեռեա աշխատելոյս ի յուլովից մահացուցչաց դեղարքութեանց: Անոնու ինձ շնորհեա զմախթանաց հմոց խնդիրս առատաբաշխ եւ ողորմած. նախ ընկալ փառատրութեամբ, արժանացո զիս մարդասէր ընդ գերակայան, ի նոյն ձայն գովողաց ըզբեղ օրհնել անլուելի միշտ յաւիտեան»¹⁰:



Մի էջ № 777 ձեռագրի հիշատակարանից

Հարկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրում Հովհաննեսի «Ողբ»ի լուսանցքում գրված է «ԲԿ», որ նշանակում է «Երկրորդ կողմ»: Շարականները, ինչպես հայտնի է, ունեն ութը ձայն, այսինքն ութը եղանակ, որոնցից չորսը՝ «ձայն» են կոչվում, իսկ չորսը՝ «կողմ»: Հովհաննեսի այս տաղը, ուրեմն, երգվել է չորրորդ կողմի եղանակով: Հովհաննեսի այս տաղի եղանակով: Հովհաննեսի այս տաղի եղանակով մասին ձեռագրի լուսանցքում պահված այս նշումը վիտակին արտաբանվում է կիրակոս Գանձակեցու հետևյալ տեղեկությունով. («Յովհաննէան») Արար շարականն Ղեռն-

10. Հարկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 7, ք. 90բ—91ա

դեանց եղանակաւ եւ յարմար բանիւ¹¹: Ուրեմն, Հովհաննեսը ո՛չ միայն բանաստեղծ է եղել, այլև ձայնագրող: Այս կարևոր փաստի վրա հրավիրում ենք հայ երաժշտութեան պատմութեամբ զբաղվող մեր մատենագետների ուշադրությունը:

Կարևոր է նշել նաև այն, որ Հովհաննեսի այս տաղը վերջնապէս հետո գրված է եղել տասներկու տող ծավալով մի այլ աղոթք-բանաստեղծություն, երկու բանից բաղկացած մի վերնագրով «Փոխ ասա»: Այս երևույթին, Հովհաննեսի «Ողբ»ը գրված էր եկեղեցում երգելու նպատակով, որից հետո փոխ պիտի ասվեր վերջին տասներկու տող բանաստեղծությունը:

Ո՛ւմ է ուղղած եղել Հովհաննեսի իր երկրորդ նամակը, որի վերնագիրն է՝ «Առ կոյրն աշեղագոյն եւ լուսատը»: Արդյոք այստեղ նրա աշխարհը նորից Սարգսի մասին չէ՞, որը աշբից կույր է եղել, բայց մտքից հարտատ, լուսավոր: Մեզ դժվար է առայժմ հաստատապես որևէ բան ասել:

Ալիշանը Հովհաննեսի անունով հիշում է նրա մի այլ տաղը՝ «Տաղ ի յարուիրն Քրիստոսի» վերնագրով¹², որը դեռ չի հրատարակված:

Հարկ. ՍՍՌ Պետական մատենադարանի տարերգուների թեմատիկ ցուցակում Հովհաննեսի անունով գրանցված են երկու այլ տաղեր ևս, որոնց մասին մինչև այժմ խոսք չի եղել հայագիտության մեջ: Նրանցից մեկն ունի «Կանայք որ եկին ի սուրբ գերեզման» վերնագիրը, իսկ մյուսը՝ «Կիզել մի տեսայ»: Առաջինը, ընդօրինակված է միայն մի ձեռագրում — № 2191, ք. 92 ա: Ընդօրինակել է Լեւոնտիոս գրիչը 1684 թվին Մերտինում: Կրկրորդն ընդօրինակված է մի շարք ձեռագրերում (№ 4328, ք. 75 ա—77 ա, 1737 թվի ընդօրինակությամբ, № 3417 (1903), ք. 49—50, XVIII դարի ընդօրինակությամբ, № 5614 (925), ք. 18բ՝ Գրիգոր գրչի կողմից Բանաքեռում (ձեռագիրը 1543 թվի է, բայց մեր վերև հիշված տաղը ուշ ընդօրինակությամբ է), № 7708 (384), ք. 50ա, XVIII դարի ընդօրինակությամբ, № 8605, ք. 116 ա—117բ, 1676 թվի ընդօրինակությամբ, № 7707 (383), 1611 թվի ընդօրինակությամբ, № 8968 (599), ք. 271 ա—273 բ, 1556 թվի ընդօրինակությամբ, և № 8740, ք. 53 ա, XVIII դարի ընդօրինակությամբ: Վերջին տաղն ունի և այլ վերնագիր՝ «Տաղ», «Տաղ անգնի եւ գեղեցիկ», «Տաղ սիրոյ եւ դո՛վասատնութեանց» և այլն:

Այս երկու տաղերից ո՛չ մեկը Հովհաննեսի-

11. Կիրակոս Գանձակեցի, էջ 105:
12. Ղ. Ալիշան, «Յուշիկը», Բ հատոր, էջ 300:

նր լինել չեն կարող. ո՛չ տաղերի ոճը, ո՛չ լեզուսի և ո՛չ տաղի կառուցվածքը Հովհաննիսիանը չեն: Հովհաննիսիանն է, Հովհաննիսիանն է, Հովհաննիսիանն է Սարկավազը ընդհանուր կամ Սարկավազ Սալաճորցու հետ, կամ դուրսից և՛ որևէ Սարկավազ կրողն ունեցող հեղինակի անձնավորության հետ: Երկրորդ տաղը որոշ ձևազրկելով վերագրված է և Բուշակին ու կիրակոսին¹³:

Վենետիկյան Մխիթարյանների մատենադարանում, ըստ հատկապես Նալբանդի կազմած ձեռագրաց համառոտ ցուցակի, կան Հովհաննիսի հեղինակությանը Գրիգոր Լուսավորչի, Սահակ-Մեսրոպի և Ներսես Մեծի ներդրումները:

2. Ոսկանյանն իր վերև հիշված աշխատության մեջ մատնացույց է անում Հովհաննիսի անունով մի տաղ և՛ «Սարկավազ վարդապետի է առաջադ Մարտ ընդ աստուծո» (ոյ)» վերնագրով: Այդ տաղը պահել է Վենետիկյան Մխիթարյանների մատենադարանի № 797 ձեռագրի տաղարանը՝ նա բաղկացած է 54 տներից, որոնցից Ոսկանյանը միայն չորս տունն է հրատարակել՝ երկուսը սկզբից և երկուսը վերջից: Անհրաժեշտ ենք համարում ստորև բերել հրատարակված այդ Տաղը.

«Ծրք խաչեցար վասն աշխարհի
 և երախտիք զմարդկան ազգի
 Արքեր բացախ դառն եւ լեղի,
 Առեր ապտակ թըքով ի լի,
 Է՞ր թաղեցար դու ի յերկրի,
 Եւ խիպն ի սրտն (?) շանկանի
 Եւ զիէս աշխարհ անտանայի» (սկիզբը):
 «Իմ տէր, արա՛ պատասխանի,
 Ես քեզ մեղատըր զայս ասի.
 Զիտ՝ վե՞մ ես մարդ աղտեղի,
 Համարձակել քո ստաջի:
 Բայց ինչ ներեմ, ո՛վ հայր բարի,
 Դասեա ի գունդս քո հօտի
 Եւ քեզ պատիւ ամենայնի
 Այժմ եւ յաւետ անյուելի» (վերջը)¹⁴:

Զնայած այս տաղի ընդօրինակությունը չկա Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանում և ամբողջական տեքստը չունենք ձեռքի տակ, սակայն վերև բերված տների լեզվին և շարժումն նայելով, դժվար չէ ստեղծել, որ այդ տաղը ևս Հովհաննիսիանը լի-

13. Այս տաղի վրա կանգ ենք առել մենք մեր «Ընտ ժողովուրդը և Մոսկվան միջնադարյան հայ մատենագրության մեջ» հոդվածում, որը հրատարակվել է «Է. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի Գիտական աշխատությունների մեջ 1949 թվին:

14. 2. Ոսկան, «Հովհաննիսի Սարկավազի գրությունները», «Հանդես ամսօրեայ», 1925 թ., էջ 227:

անկ չի կարող: Հովհաննիսի լեզուն նուրբ բանաստեղծական լեզու է, խոհական-գիտականօրհանական, տեղ տեղ գործ է թծում հունարան տերմիններ, իսկ վերև բերված տաղի լեզուն ուղ դարերում գործածված լեզու է: Այնուհետև, Հովհաննիսի տաղերին հատուկ չէ միահանգությունը: Հովհաննիսի, հակառակը, միահանգությունից խուսափելու համար հաճախ փոխում է տողի վերջին բառերը: Պրոֆ. Մ. Արեղյանը Հովհաննիսի վերագրվող այս տաղի հարազատության վրա, հավանական է, այնքան է կատարածել, որ պիտուրդ է համարել նույնիսկ կանգ առնել նրա վրա և խոսել նրա մասին:

Ինչպես պարզվում է, նշված տաղը պատկանում է Զրիկին և թյուրիմացարար է վերագրվել Հովհաննիսին: Այդ տաղն ամբողջությամբ հրատարակվել է Զրիկի րանաստեղծությունների ժողովածուում և ունի «Գանգատ առ Քրիստոս Յաղագս տարբեր վիճակաց մեծատան եւ աղքատի» վերնագիրը¹⁵:

Հովհաննիսի հեղինակությամբ մատենագիրները հիշում են նրա ներդրումները, որոնք նվիրված են եղել Տրդատին, Ներսեսին, Սահակին, Մեսրոպին և Ղևոնդյանց: Կիրակոսն այդ մասին գրում է. «Սա (այսինքն Հովհաննիսի) գրեաց ճառս ներքողականս ի մեծագոր արքայն Տրդատ, ի սուրբ հայրապետն Ներսէս, եւ ի սքանչելի Սահակ եւ Մեսրոպ. արար շարական Ղևոնդեանցն և ղանակաւ եւ յարմար բանիւ»¹⁶:

Ղևոնդյանց տաղի, ինչպես և մի քանի այլ տաղերի Սարկավազի հեղինակությանը պատկանելու մասին հիշում է նաև Ստեփանոս քահանան իր «Յաղագս շարականացն՝ թէ յումմէ՛ են երգեալ» շարածո աշխատության մեջ: Նա այդ մասին գրում է.

«Ըզ Ղևոնդեանց մանկունքն մին,
 Մեծ Սարկաւազն՝ որ Աղբատին.
 Զհայրապետացն գուրը Յակոբին,
 Նուն, Յովանէան սուրը Ակոբին»¹⁷:

Դժբախտաբար, Հովհաննիսի բոլոր ներդրումները մեզ չեն հասել: Սույսմ, հայտնի է նրա Ղևոնդյանց ներքողը, որը բարձր գնահատականի է արժանացել հայագիտության մեջ այն բանի համար, որ այստեղ մեր մատենագրության մեջ առաջին անգամ արտահայտվել է ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու գաղափարախոսությունը. «Հեղմամբ արեան քո հօտապետաց, զեկեղեցւոյ՛

15. Զրիկ, «Բանաստեղծություններ», Երևան, 1941 թ., էջ 247—255:

16. Կիրակոս Գանձակեցի, էջ 105:

17. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, 166, № 1424, թ. 280 ա:

քո ցրեակ մանկունս ժողովեա յուրախութիւն, զվտարեալս տրտմութեամբ եւ արտասուաց յորդահոս բըղխմամբ իրկուկեան մերոյ, պարգեւաց մերոց բաշխող»¹⁸, Պրոֆ. Մ. Աբեղյանը, նշելով Հովհաննեսի ներքողի արժեքն այս տեսանկյունով, գրում է. «Սարկավագ վարդապետի այս աղոթքը շատ իրոքը, իր ձևով շատ հասարակ բան է, բայց իր բովանդակությամբ մեծ և վսեմ է և անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն ազդու է, մանավանդ երբ իր շքուղիք եղանակով երգվում էր եկեղեցում տառապալ հավատացյալներից, առանձնապես նրանցից, որ դեռ երկար դարեր զգում են իրենց վարատած լինելը և աչքերը կարոտով դարձնում դեպի իրենց բնիկ երկիրը՝ Հայաստան»¹⁹:


Բայց այնուամենայնիվ, հարց է առաջանում՝ միթե՞ Հովհաննեսի, որ «պոետիկոս» մականունն է սննեցել, մյուս բոլոր տաղերը կորել են: Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ այդպես չէ: Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերում, մեր կատարած պրպոտումների ժամանակ, նախանցյալ տարի, մեզ հաջողվեց հայտնաբերել Հովհաննեսի արժեքավոր մի արձակ բանաստեղծությունը՝ մոտավորապես ութը հարյուր տող ծավալով: Սարկավագի այս աշխատությունը շնայած վերնադիր շունի և ոչ էլ հեղինակի անունը, սակայն ընդօրինակող գրիչն իր հիշատակարանում հայտնում է, որ այդ բանաստեղծությունն, անմի՞ճելի, պատկանում է Հովհաննեսի հեղինակությանը. «Այս բանք քերթողականը ասացեալ մեծի պէտքովսին Սարկավագին որ ի տիեզերահոջակ ուխտին Հաղբատ, գտի ես նուատոռնն ի մանկունս եկեղեցւոյ»²⁰:

Նույն հիշատակարանից երևում է, որ ձեռագրի նախագաղափար օրինակը Հովհաննեսի ինքնագիրն է հանդիսացել: Այդ նկատառումով էլ հիշատակագիրը խնդրում է ընդօրինակող գրիչներից, որպեսզի նրանք չափելացնեն և չպակասեցնեն Հովհաննեսի այս բանաստեղծությունը, նրա տեղը և արվեստը. «Արդ՝ մի՛ տք յանդգնեալ իշխեսցէ յանելու կամ պակասեցուցանել ի քանից, կամ ի տանց եւ յարուեստից, զի եւ մեք ոչ իշխեցաք յանելու կամ պակասեցուցանել, զոր ինքն իւրով ձեռամբն գրեալ էր» (թ. 51բ):

18. «Շարական հոգեւոր երգոց», Էջմիածին, 1861 թ., էջ 531:
 19. Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», II հատոր, էջ 51:
 20. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 777, Թ. 51բ:

Հիշատակարանի վերև բերված պարբերությունից հետո ավելացված մի ակնարկից՝ «ըստ այսմ օրինակի էր կտակն», երևում է, որ հիշատակագիրը իր ձեռքի տակ ունեցել է Հովհաննեսի կտակ-հիշատակարանը:

Հիշատակագրի տեղեկություն մեզ ուշա-



Մի էջ Հովհաննեսի բանաստեղծություններից (վերցված Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 7 ձեռագրից)

դրություն արժանի է նրա փնդողների այն կետը, ինչ վերաբերում է Հովհաննեսի բանաստեղծության տները չափելացնելուն և չպակասեցնելուն՝ «Մի՛ տք յանդգնեալ իշխեսցէ յանելու կամ պակասեցուցանել ի քանից, կամ ի տանց (ընդգծումը մերն է— Ա. Ա.) եւ յարուեստից»: Հովհաննեսի ներկա աշխատությունը արձակ բանաստեղծությունն է, չափ չունի, ուստի և անհասկանալի

է մնում՝ թե ի՛նչ իմաստով է գործածված ատունս բատր:

Հովհաննեսի այս բանաստեղծութունը, դժբախտաբար, մեզ հասել է թերի միժակով: Տեքստը պակասավոր է սկզբից և վերջից: Հիշատակագրի տեղեկությունից երևում է, որ Հովհաննեսի այս աշխատությանը պակասավոր է եղել դեռ ընդօրինակման ժամանակ: Հիշատակագիրը հայտնում է այդ մասին և խնդրում է ընդօրինակողներին, որ եթե որևէ մեկին հայտնի լինի Հովհաննեսի այդ բանաստեղծության ամբողջական տեքստը, ապա թող լրացնի պակասը: «Սկիզբն եւ կատարածն եղծեալ (է), — գրում է նա, — եթէ գտցես ուրեք, զբովանդակն դրեա» (թ. 51 ք):

Հովհաննեսի այս բանաստեղծութիւնը, ըստ վանդակագրի կրոնական է: Նա ուղղված է քաղկեդոնականության դեմ: Հովհաննեսը, մեծ վարպետությունը, սպանիչ քննադատության է ենթարկում քաղկեդոնականությունը և աշխատում ապացուցել Հայ եկեղեցու առաքելական անաղարտությունը: XII դարում Բյուզանդիայի Արևելքում վարած ազդեցիվ քաղաքականության պայմաններում այդ վիճը հայ հասարակական շրջանները հուզող կարևոր հարցն էր: Նա ուներ նաև քաղաքական իմաստ: Մեզ համար այժմ, իհարկե, կարևոր միտլաստիկ բովանդակություն ունեցող վեճերը չեն, այլ ա՛յն հարուստ լեզուն, ճարտասանական ա՛յն բարձր արվեստը, որը գործ է ածում Հովհաննեսը հակասակորդի գաղափարախոսությունը եղծելու նպատակով: Հովհաննեսի այս աշխատությունն իր բովանդակությամբ շատ է նման Եզնիկ Կողբացու «Ողծ արդանդոց»ին:

Յույց տալու համար թե Հովհաննեսը ի՛նչ վարպետությամբ ու համարձակությամբ է քննադատում իր հակառակորդին, անհրաժեշտ ենք համարում անել միայն երկու փոքրիկ մեջբերում:

«Ընդէ՛ր ոչ թշնամանես, իւ խոտես, զորս եւ Աստուած: Հի՛մ զհրամայեալս Աստուծոյ ի՛ դատապարտութիւն, դեես սրբոց, եւ հրաժարեցելովքն պատեալ դու փարիս: Չատելիս տեան սիրես յարգանաք, եւ զսիրելիս նորս անարգես թշնամանաք: Որո՞ց արդեք մասն իցէ, ասողն բարի զչար,

Եւ ընդդէ՛մ նմին շար՝ զբարին, Ղլոյն խաւար եւ խաւարն լոյս» (թ. 5բ):
Յույց ինձ եւ զթոյնս,
Ղո՛րս արդեք ընուս հրաշագործութիւնս, Որո՞վ միով եւ դու բերես առ նա զնամանութիւն,

Եւ որո՞ց սքանչելեաց հանդիսականք երեւո՞ւնք:

Եստե՛ն քեզ համարձակութիւնս, Ասել զոր ինչ կամիսդ առանց ամաւթոյ: Երկնչիւմ ի հայհոյութենէ, որ ծնանի ի քամմէ՛ առաջարկութենէ:

Եթէ իցէ ի քեզ բան իմաստութեան, տո՛ւր պատասխանի, Ապա թէ ոչ, ափ քո եղիցի՛ ի վերայ քերանոյ քո» (թ. 14 ա):

Հովհաննեսի մեզ հասած հայտնի աշխատությունների շարքում մատենագրության մեջ հայտնի է նրա «Ընդդէմ երկրաբնակաց» աշխատությունը²¹: Այդ նույն աշխատությունը հիշված է նաև Մարմոսավանից մատենադարանի մեզ հասած ձեռագրերի ցուցակում, որը հրատարակել է Խաչիկ վարդապետը «Շողակաթ»ում: Այդ ցուցակում հիշված են հետևյալ աշխատությունները. «Ա. (1) գիրք եւս մեր վարդապետաց ընդդէմ երկրաբնակաց: Ա. (1) գիրք եւս Յովհաննէս վարդապետի, ոտանաւոր սկիզբն»²²: Հովհաննեսի վերև հիշված աշխատությունը այլ վերնագրով հիշված է նաև Բառնարաս Եսայանի կազմած Վենետիկյան Մխիթարյանների մատենադարանի ցուցակում: Այնտեղ նաև ունի «Ճառ ընդդէմ նեստորականաց» անհրապիրտ²³: Հովհաննեսի «Ընդդէմ երկրաբնակաց» կամ «Ճառ ընդդէմ նեստորականաց» աշխատությունը նրա վերև հիշված բանաստեղծությունն է, միայն որոշ ընդօրինակություններում խմբագրվել է զգալի փոփոխության է ենթարկվել: Նրա նշված աշխատության նախնական տեքստը բանաստեղծություն է, իսկ խմբագրված, փոփոխված տեքստը արդէն վեր է ածվել զոտ աստվածաբանական պոլեմիկ աշխատության:

Մի քանի խոսք Հովհաննեսի նշված բանաստեղծությունը պարունակող ձեռագրի մասին: Նա գրանցված է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 777-ի տակ: Զեռագիրը հիշատակարան չունի, բայց զբյուրվածը նախերգով, մոտավոր ժամանակը կարելի է որոշել XIII դար: Զեռագիրը չի

21. Կարինյան ցուցակ, № 513 (հմտ. Մամվի Անցու ժամանակագրության էջ 292-ի շորորդ ծանոթագրությունը):

22. Խաչիկ Մ. Վ., «Նորագուտ մագաղաթ ցուցակ Եղիշտավանից մատենադարանի» («Շողակաթ», էջ 167):

23. Բառնարաս Եսայան, «Վենետիկի Մխիթարյանց հայ գրագրաց համառոտ ցանկ (տես «Մարկավաւ վարդապետ» քոտ այբուբենական ցանկի): Այս ցուցակը կազմված է 1888 թվին, իսկ նրա պատճենը 1896 թվին, Ամատունու արտագրությամբ կա մեզ մոտ»

պահել գրչի անունը. մի տեղ միայն պահպանվում է, որ գրիչը «ենկեղեցու մանուկ» է հանդիսացել: Ձեռագիրը սկզբից, ինչպես ասել ենք, թերի է: Առջևից պահպանում է 21 պրակ. պահվածը սկսում է «Ն» տեսքից: Պրակների թվահամարը հաշված է ըստ թվագրումար հաշվի, այսինքն «Ժ»-ից հետո եկող տառերը տասնամյակները չեն, այլ սոցիոլոգիական միավորներ. արաբես, «Ի»-ն համասար չէ 20-ի, այլ 11-ի: Այդ հաշվով, ձեռագրի սկզբից պահպանում են «Ա»-ից «Յ» պրակները, ընդամենը 21 պրակ: Տվյալ ձեռագրի յուրաքանչյուր պրակը բաղկացած է տաս թերթից, ուրեմն, սկզբից պահպանում է 210 թերթ: Ցամալի է պատկերացնել այն խոշոր կրթատուր, որ մենք ունենք աշատեղ: Ձեռագիրը գրված է միասյուն, խոշոր բոլորապարտով: Հովհաննեսի նորահայտ բանաստեղծությունների մեջ գործ են անում մի շարք նոր բաներ, որոնք չկան Հայկազյան բանաստեղծում: Արդյապիսի բաներից մարերի է նշել «Սպիտակացան ձիան», «Էլիսեմ փաղվաղակի», «Բողաքու թողուլ», «Ասարեսաց պղնձեայ», «Սարրատառ», «Չըրընքաց», «Ստուգակարգ», «խոզամարտ», «խոզամարտիրոս», «Նյառաբլիկեցովեն», «Վաղածամեայ», և այլն: Անշափ շատ են այնպիսի բաները, որոնք մեկական օրինակներով են նշված Հայկազյան բանաստեղծում:

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 45 ձեռագրում, որն ընդօրինակել է Սարգիս Եղեկացին 1642 թվին Լիմ անապատում (տես թ. 295ա), բերված է անխորադիր խրթնաբան մի բանաստեղծություն, որի առաջին տառերը հորվում են՝ «Յովհաննես» և նույն Ո՞ր Հովհաննեսին է այս բանաստեղծությունը, Սարկավա՞ց Հովհաննեսինը, Երզրնկացիինը, թե ուրիշ մեկինը, դժվար է հաստատապես որևէ բան ասել: Նկատի ունենալով, որ բանաստեղծությունը փոքր է, ուստի և անհրաժեշտ ենք համարում բերել ստորև.

«Յումարտութիւն խիպտական,
 Խախտածացեալ աղնաքերան.
 Ոհութիւն շամառացեալ,
 Ստատակասարս փառ երեւեալ.
 Զնրումն ուխից պեռալեռտող,
 Խումբ բաղասաց բնասից հետտող.
 Աղիբար կուրծ քատակեալ,
 Վեհ խատապիտ մեմեղաւեալ.
 Նպոյր ոտն եռակի,
 Զրահիդ պանծումն ունայն ևւ լի.
 Իկունարող զօշ ուրացեալ,

Բանից բոլոր մախիդացեալ.
 Սա քեզ ճիւղազ զոհ ձենձերի,
 Թոնձառական սիզէկ սեռի»²⁴:
 Այսպիսով, Հովհաննեսի մեզ հասած ձեռագիր բանաստեղծությունների ուսումնասիրությունից պարզվում է հետևյալը.

1. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի նորահայտ մի ձեռագրից երևում է, որ Հովհաննեսի հեղինակությամբ հայագիտության մեջ հայտնի «Առ Սարգիս վասն տողիցն», «Վասն միւսոյ ողբակահիճ» և «Առ կոյրն աշեղագոյն եւ լուսաւո» տաղերը, իրականության մեջ, ոչ թե Հովհաննեսի ստղեր են, այլ նրա երեք նամակները:
2. Հովհաննեսի առաջին նամակի մեջ կոչված մի տեղեկությունից պարզվում է, որ նա իր «Սարեսակ» տաղը գրել է Սարգիս համար:

3. Հովհաննեսի երկրորդ նամակի մեջ ակնարկված է նրա մի տաղը՝ «Ողբ» խորագրով, որը հայտնաբերված է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 7 ձեռագրում: Այս տաղը, որը միջնադարյան տաղերգության գլուխ գործոցներից մեկն է, բաղկացած է 20 տողից, և նվիրված է վերև հիշված Սարգիսին. տաղի ստղերի առաջին տառերը ազդուստիկոսով հորվում են՝ «Յովհաննէս քահանայ Սարգիս Մեծի խնդալ Ած կենդանի»:

4. Հովհաննեսի անունով հայկական մատենագրության մեջ հիշված մի շարք տաղեր՝ «Կանայք որ եկին ի սուրբ քերեզման», «Կիւղէլ մի տեսայ» և այլն, Հովհաննեսինը չեն: Հովհաննեսինը չէ նաև Ոսկյանի հիշած «Մարտ ընդ Աստուծոյան» Այս տաղը Յրիկի նշանավոր քանդատի փարագրություններից մեկն է և թյուրիմացությամբ է Հովհաննեսին վերագրվել:

5. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանում հայտնաբերվել է Հովհաննեսի մի նոր արձակ բանաստեղծությունը մոտ 800 տող ծավալով: Նա կրոնական-պոլեմիկ բովանդակությամբ ունի և իր արժեքով չի զիջում Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»ին:

6. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 43 ձեռագրում Հովհաննեսի անունով հայտնաբերվել է խրթնաբան մի փոքրիկ բանաստեղծություն որի մեր հեղինակ Հովհաննեսին պատկանելու մասին վկայություններ չկան և հաստատապես ոչինչ ասել չենք կարող ՚:

²⁴ Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 47 (51), թ. 312բ:

